

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—Տօն գիտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* *
*

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—Տօն ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* *
*

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քհն. Բաղրամյանը: Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

* *
*

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *
*

Հոկտեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Կ. Պոլսից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերշ. Տ. Շահան արքեպս. Սվաճյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *
*

Հոկտեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վարդան ավ. քհն. Դյուլգերյանը և «Հայր-մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *
*

Հոկտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* *
*

Հոկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* *
*

Հոկտեմբերի 27-ին, կիրակի.—Գիւտ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Կիլիկյան Աթոռից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *
*

Հոկտեմբերի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ: